

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը, ընդառաջելով Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան և արևմտյան թեմերի հայոց թեմական առաջնորդներ Տ. Թորգոմ և Տ. Վաչե արքեպիսկոպոսների, Կանադայի հայոց նորակազմ թեմի առաջնորդ Տ. Վազգեն արքեպիսկոպոսի հրավերներին, սույն թվականի հոկտեմբերի 14-ից մինչև նոյեմբերի 23-ը հովվապետական այցելություն տվեց Միացյալ Նահանգներ և Կանադա՝ իր օրհնությունները բաշխելով հայկական եկեղեցական համայնքներին ի Նյու Յորք, Վաշինգտոն, Բոստոն, Լոս Անջելոս, Սան Ֆրանցիսկո, Ֆրեզնո, իսկ Կանադայում՝ Տորոնտո և Մոնրեալ:

Այս առթիվ Նորին Սրբությանը, որպես նրա շքախմբի անդամներ, ուղեկցում էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը և Մայր Աթոռի միաբան Տ. Նավասարդ աբեղա Կճոյանը՝ գավազանակիր:

Իր ուղևորության ընթացքում Վեհափառ Հայրապետը այցելեց վերոհիշյալ համայնքների եկեղեցիներ, որտեղ բազմահազար հայ հավատացյալների ներկայությամբ տեղի ունեցան սուրբ պատարագի հանդիսավոր արարողություններ, համատեղ էկումենիկ աղոթքներ, երեկոյան ժամերգություններ հայ և օտար Եկեղեցիների Մայր տաճարներում՝ Եպիսկոպոսական, Հույն Օրթոդոքս, Հռոմեական Կաթոլիկ, Ավետարանական-Լութերական, Ասորական, Ղպտական և այլ քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականների մասնակցությամբ:

Տորոնտոյում Ամենայն Հայոց կաթողիկոսը հայ հավատացյալների խուռներամ բազմության ներկայությամբ, բուռն ոգևորության պայմաններում, կատարեց Սուրբ Երրորդություն նորակառույց եկեղեցու օծումը:

Հայոց Հայրապետը բարձր մակարդակի պաշտոնական հանդիպումներ ունեցավ թե՛ Միացյալ Նահանգներում և թե՛ Կանադայում, պետական և քաղաքային իշխանությանց ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումների բարձրակետը հանդիսացավ Վաշինգտոնում Նորին Սրբության այցելությունը Սպիտակ Տուն, որտեղ ջերմորեն ընդունվեց Միացյալ Նահանգների մեծահարգ նախագահ Նորին Գերազանցություն Ռոնալդ Ռեյգանի կողմից:

Նույնպիսի ջերմ հանդիպում տեղի ունեցավ Լոս Անջելոսում կազմակերպված մեծ ճաշկերույթի ընթացքում՝ Վեհափառ Հայրապետի և Կալիֆոռնիայի նահանգի մեծարգո նահանգապետ տիար Ջորջ Տյոքմեճյանի հետ:

Հիշատակության արժանի է նաև Կանադայում Նորին Սրբության հանդիպումը Օնթարիո նահանգի վարչապետ Դեյվիդ Պետերսոնի հետ՝ հույժ բարեկամական և սիրալիր մթնոլորտում:

Իր այցելած քաղաքներում Վեհափառ Հայրապետը ջերմ հանդիպումներ ու զրույցներ ունեցավ նույնպես քաղաքագլուխների և քաղաքային իշխանությանց այլ բարձրաստիճան ներկայացուցիչների հետ:

Նյու Յորքի քաղաքագլուխ հարգարժան Էդվարդ Քաչը իր պաշտոնատեղում, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, տվեց պաշտոնական ճաշկերույթ:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում Կիպրոսի Հանրապետության լիազոր դեսպանի հրավերով Նորին Սրբությունը նախագահեց Միացյալ Ազգերի Կազմակերպության հարկի տակ ի պատիվ իրեն տրված ճաշկերույթին, որին մասնակցեցին աշխարհի 54 տարբեր պետությունների դեսպաններ և ներկայացուցիչներ: Ճաշկերույթից հետո Վեհափառ Հայրապետը հանդիպում և զրույց ունեցավ Միացյալ Ազգերի Կազմակերպության գլխավոր քարտուղար մեծահարգ տիար Պերես դե Կուելյարի հետ՝ հարգալից և ջերմ մթնոլորտում:

Ամենայն Հայոց կաթողիկոսը քաղաքավարական այցելություններ տվեց Սովետական Միության հարգարժան դեսպաններին և հյուպատոսներին ի Վաշինգտոն, Սան Ֆրանցիսկո և Մոնրեալ՝ ունենալով բարեկամական ջերմ զրույց:

Իր ուղևորության ընթացքում Վեհափառ Հայրապետը իր օրհնությունները բաշխեց բազմաթիվ հայկական ամենօրյա և շաբաթօրյա վարժարանների կրթական մշակներին և աշակերտությանը՝ բարձր գնահատելով կրթական գործի ծավալումը և մայրենի լեզվի ուսուցումը ի խնդիր Սփյուռքի հայության ազգային ինքնության պահպանման:

Վեհափառ Հայրապետը այցելություն տվեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Նյու Յորքի կենտրոնին, «Արմինիը Ասեմբլի»-ի Լոս Անջելոսի մասնաճյուղին, Սուրբ Ներսես ընծայարանին ի Նյու Ուշել (Նյու Յորքի նահանգ), Թեքեյան Մշակութային Միությանը ի Մոնրեալ և բազմաթիվ հանդիպումներ ունեցավ նաև այլ հայկական կազմակերպությանց վարչական անդամների հետ:

Հայրապետական սույն ուղևորության ընթացքում Վեհափառ կաթողիկոսի հետ հարցազրույցներ ունեցան հայ և օտար մամուլի թղթակիցներ, ինչպես նաև ռադիոյի և հեռուստատեսության ներկայացուցիչներ, որոնք ապա լայնորեն արձագանքեցին Վեհափառ Հայրապետի պատգամներին և տեղի ունեցած հանդիսություններին:

Միտիթարական է արձանագրել, որ այս առթիվ կարևոր նյութական նվիրաբերումներ կատարվեցին բարեպաշտ ազգայիններից կողմից՝ ի նպաստ Հայաստանում նոր բացվելիք եկեղեցիների վերանորոգման:

Ամենայն Հայոց կաթողիկոսը իր բազմաթիվ քարոզներով և ճառերով, ուղղյալ իր ժողովրդին, պատգամաբերը հանդիսացավ Աստուծո խոսքի, Սուրբ Էջմիածնի խորհրդի, դաստիարակչական-բարոյական պատվիրանների, ազգային-մշակութային արժեքների և մայրենի լեզվի պահպանման անհրաժեշտության, վերածնված Մայր Հայրենիքի պայծառ նվաճումների, ինչպես նաև աշխարհի խաղաղության ամրապնդման հրամայականի՝ ազգությունների համերաշխ գործակցությամբ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
4 դեկտեմբեր 1987 թ.